ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Քոնթուրգլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ
2017 թվականի ներդրումային գործունեության
մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2018
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

ԲԱԺԻՆ 1. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի
2017 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը 4

ԲԱԺԻՆ 2. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2017 թվականի
ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները 6

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները 6

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները.....9

ԲԱԺԻՆ 3. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2017 թվականի
ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները.....10

3.1. Հիդրոէլեկտրակայանների հիդրոլոգիական կառույցների և պատվարների ուսումնասիրություն և շինարարական աշխատանքների գնահատում 10

3.2. Շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավվում 10

3.3. Շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ.....12

ԲԱԺԻՆ 4. Հետագա սակագներով փոխհատուցման
ենթակա ներդրումների ծավալը.....13

4.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված
ներդրումների ծավալը.....13

4.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը 15

Եզրակացություններ.....16

Հղումներ օգտագործված նյութերին 17

Նախաբան

Սույն վերլուծական տեղեկանքը մշակվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) 2018 թվականի աշխատանքային ծրագրի 18-րդ կետի և արտացոլում է «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ ընկերություն) 2016-2017 և 2017 թվականի ներդրումային ծրագրերի (այսուհետև՝ ներդրումային ծրագիր) մոնիթորինգի գնահատականը: Փաստաթուղթը ներառում է ներդրումային ծրագրի և փաստացի կատարված աշխատանքների համադրությունը, իրականացված ծախսերի արդյունավետության, ինչպես նաև՝ սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի վերլուծությունը:

Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2016-2017[Որոշում 2] և 2017[Որոշում 3,4] թվականների ներդրումային ծրագրերը և փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին լիցենզավորված ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված հաշվետվությունը [Հաշվետվություն]:

ԲԱԺԻՆ 1.
«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2017 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2017 թվականի տարեկան ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր միջոցառումներ իրականացնել ընկերությանը պատկանող հիդրոէլեկտրակայանների հիդրոլոգիական կառույցների և պատվարների ուսումնասիրության ու շինարարական աշխատանքների գնահատման, շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավման նպատակով: Ներդրումներ էր նախատեսվում իրականացնել հիդրոէլեկտրակայանների շահագործման կազմակերպման նպատակով՝ գրասենյակային գույքի, համակարգչային տեխնիկայի, չափիչ սարքերի, գործիքների և անվտանգության պարագաների, յուղամաքրման համար անհրաժեշտ շարժական սարքերի, վերհան ավտոմեքենայի ձեռքբերման, ինչպես նաև վարչական շենքի նախագծման և վերակառուցման, Տաթև, Շամբ և Սպանդարյան ՀԷԿ-երում փակ պահեստների, Տաթև ՀԷԿ-ի և Սպանդարյան ՀԷԿ-ի շենքերի հիմնանորոգման և հիդրոէլեկտրակայաններում կամրջակային կռունկների վերականգնման և արդիականացման ուղղությամբ:

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2016-2017 և 2017 թվականների ներդրումային ծրագրերով նախատեսված էր իրականացնել 1 324,8[1] մլն դրամի ներդրումներ, որից.

- հիդրոէլեկտրակայանների հիդրոլոգիական կառույցների և պատվարների ուսումնասիրություն և շինարարական աշխատանքների գնահատում՝ 235,6 մլն դրամ,

[1] Սույն վերլուծական տեղեկանքում բոլոր գումարները ներկայացված են առանց ԱԱՀ:

- շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավվում՝ 502,1 մլն դրամ,
- շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 572,5 մլն դրամ,
- չափիչ սարքերի և յուղամաքրման համար անհրաժեշտ շարժական սարքերի ձեռքբերում՝ 14,6[2] մլն դրամ:

Ներդրումային ծրագրի ծավալների բաշխումն ըստ հիմնական ուղղությունների ներկայացված է Գրաֆիկ 1-ում:

Գրաֆիկ 1



[2] «Չափիչ սարքերի և յուղամաքրման համար անհրաժեշտ շարժական սարքերի ձեռքբերման» ուղղությամբ ներդրումները համաձայնեցված են ընկերության 2016-2017 թվականների ներդրումային ծրագրով:

ԲԱԺԻՆ 2.
«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2017 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

2.1. Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն Հաշվետվության՝ ընկերությունը 2017 թվականի ընթացքում իրականացրել է 693,6 մլն դրամի ներդրումներ, որից շահագործման են հանձնվել 513,3 մլն դրամի ներդրումներ: Մնացած 180,3 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի իրականացված և ավարտված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

h/h	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը	Փաստացի իրականացված՝ ավարտված ներդրումներ	Ծրագրի կատարման ցուցանիշը	Իրականացված ներդրումներ՝ այդ թվում շահագործման չհանձնված		
					2017թ.	2017թ. սկզբի դրությամբ (մնացորդ)	Ընդամենը
		մլն դրամ	մլն դրամ	%	մլն դրամ	մլն դրամ	մլն դրամ
1	2	3	4	5	6	7	8
1	Հիդրոէլեկտրակայանների հիդրոլոգիական կառույցների և պատվարների ուսումնասիրություն և շինարարական աշխատանքների գնահատում	235,6	-	0%	84,2	75,8	160,0
2	Շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավում	502,1	80,7	16%	101,1	-	101,1
3	Շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	572,5	400,0	70%	400,0	-	400,0
4	Չափիչ սարքերի և յուղամաքրման համար անհրաժեշտ շարժական սարքերի ձեռքբերում	14,6	32,6	223%	32,6	-	32,6
	Ընդամենը	1 324,8	513,3		617,8	75,8	693,6

Ինչպես երևում է Աղյուսակ 1-ից, ընկերությունը 2017 թվականի ներդրումային ծրագիրը [Որոշում 3,4] կատարել է 37%-ով, իսկ չափիչ սարքերի և յուղամաքրման համար անհրաժեշտ շարժական սարքերի ձեռքբերում ենթաուղղությամբ [Որոշում 2] նախատեսված հիմնական միջոցները ձեռք են բերվել ամբողջ ծավալով:

2.2. Ներդրումների ձևավորման աղբյուրները

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են իրականացված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2

№	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Իրականացված		Շահագործման հանձնված	
		մլն դրամ	%	մլն դրամ	%
1	2	3	4	5	6
1	Նախորդ ժամանակահատվածի անավարտ աշխատանքներ	75,8	11%	-	-
2	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից	74,4	11%	74,4	14%
3	Կապալառու կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից	517,2	75%	424,7	83%
4	Սեփական ուժերով կատարված աշխատանքներից	26,2	4%	14,2	3%
4.1	*նախագծային աշխատանքներ*	26,2	-	14,2	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	693,6		513,3	

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 2-ից, Ընկերության կողմից 2017 թվականին ավարտված աշխատանքների զգալի մասն իրականացվել է կապալառու կազմակերպությունների կողմից:

ԲԱԺԻՆ 3.
«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի 2017 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

Ստորև ներկայացված է ընկերության կողմից 2017 թվականին իրականացված ներդրումների ծավալը՝ հետագայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման տեսանկյունից:

3.1 Հիդրոէլեկտրակայանների հիդրոլոգիական կառույցների և պատվարների ուսումնասիրություն և շինարարական աշխատանքների գնահատում

Հիդրոէլեկտրակայանների հիդրոլոգիական կառույցների և պատվարների ուսումնասիրության և շինարարական աշխատանքների գնահատման ուղղությամբ 2017 թվականին համաձայնեցված էր 235,6 մլն դրամ՝ ընկերության բոլոր ջրամբարների և պատվարների անվտանգության մակարդակի, տուրբինային սրահների տեխնիկա-ինժեներական վիճակի գնատաման, ինչպես նաև ջրամբարների մշտադիտարկող-հսկող ժամանակակից համակարգի ներդրման նպատակով: Նշված ուղղությամբ իրականացվել են 160,0 մլն դրամ, որոնք մնացել են անավարտ:

3.2 Շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավում

Շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավման ուղղությամբ 2017 թվականին համաձայնեցված էր 502,1 մլն դրամ՝ ջրամբարներում ձկնապաշտպան և մաքրող էկրանների նախագծման աշխատանքների իրականացման, ցանկապատների, արգելապատնեշների և ժայռաքարերի անկումից պաշտպանող համակարգերի և հիդրոէլեկտրակայաններում

տրանսֆորմատորների միջև գոյություն ունեցող պատերի կառուցման, մարտկոցային տնտեսություններում օդափոխման համակարգի և հիդրոէլեկտրակայաններում կոյուղաջրերի մաքրման տեղային կայանների ստեղծման, լուսավորության համակարգերի հիմնանորոգման և անվտանգության համակարգի բարելավման նպատակով:

«Ցանկապատների, արգելապատնեշների և ժայռաքարերի անկումից պաշտպանող համակարգերի կառուցում» ենթաուղղությամբ 2017 թվականին համաձայնեցված էր 186,0 մլն դրամ: Հաշվետվության ուսումնասիրության համաձայն այս ուղղությամբ իրականացվել և ավարտին են հասցվել 20,6 մլն դրամի ներդրումներ՝ Սպանդարյան և Շամբ ջրամբարների պատվարների եզրային արգելապատերի, ինչպես նաև Անգեղակոթի ջրամբարին և պատվարին առնչվող կառուցման աշխատանքների ուղղությամբ:

«Հիդրոէլեկտրակայաններում կոյուղաջրերի մաքրման տեղային կայանների ստեղծում» ենթաուղղությամբ 2017 թվականին համաձայնեցված էր 52,0 մլն դրամ: Այս ուղղությամբ իրականացվել են 3,2 մլն դրամի ներդրումներ, որոնք ուղղվել են Տաթև, Շամբ և Սպանդարյան ՀԷԿ-երի շենքերի կոյուղացանցերի մաքրման կայանների նախագծման աշխատանքներին: Նշված աշխատանքները մնացել են անավարտ:

«Այլ շինմոնտաժային աշխատանքներ» ենթաուղղությամբ 2017 թվականին համաձայնեցված էր 18,2 մլն դրամ: Հաշվետվության համաձայն այս ուղղությամբ ընկերությունն իրականացրել է 17,2 մլն դրամ ներդրումներ, որոնք հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ անավարտ են: Նշված ներդրումներով նախատեսված էր Տաթև ՀԷԿ-ի խմելու ջրի ջրագծի կառուցման և ասբեստ պարունակող նյութերի կառավարման ուսումնասիրության և վնասազերծման աշխատանքներ:

«Անվտանգության համակարգի բարելավում» ուղղությամբ 2017 թվականին համաձայնեցված էր 74,1 մլն դրամ՝ պահակակետերի վերանորոգման, մուտքի էլեկտրոնային բանալիների համակարգի ստեղծման և անվտանգության տեսախցիկների տեղադրման նպատակով: Այս ուղղությամբ փաստացի իրականացվել և ավարտին են հասցվել 60,1 մլն դրամի ներդրումներ:

3.3 Շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ

Ընկերության ՀԷԿ-երի հետագա անվտանգ և անխափան աշխատանքի ապահովման, ինչպես նաև աշխատանքային պայմանները կորպորատիվ պահանջներին համապատասխանեցնելու նպատակով 2017 թվականին համաձայնեցված էր 572,5 մլն դրամ՝ վերհան ավտոմեքենայի ձեռքբերման, Տաթև, Շամբ և Սպանդարյան ՀԷԿ-երում փակ պահեստների, Տաթև և Սպանդարյան ՀԷԿ-երի շենքերի հիմնանորոգման և հիդրոէլեկտրակայաններում կամրջակային կռունկների վերականգնման ու արդիականացման, ինչպես նաև գրասենյակային գույքի, համակարգչային տեխնիկայի, չափիչ սարքերի, գործիքների և անվտանգության պարագաների ձեռքբերման նպատակով:

«Չափիչ սարքերի, գործիքների և անվտանգության պարագաների ձեռքբերում» ենթաուղղությամբ 2017 թվականին համաձայնեցված էր 17,3 մլն դրամ ներդրումներ: Հաշվետու տարում ձեռք են բերվել 17,1 մլն դրամ արժեքով օդորակիչներ, տրանսֆորմատորային յուղի դիէլեկտրիկ կորուստների չափման, բեռի ավտոմատ անջատիչի ստուգման սարքեր, տեխնիկական հաճախականության գեներատոր և այլ սարքեր:

«Վարչական շենքի նախագծում և վերակառուցում» ենթաուղղությամբ 2017 թվականին համաձայնեցված էր 21,5 մլն դրամ ներդրումներ, որով նախատեսված էր իրականացնել Գորիս քաղաքի վարչական շենքի հիմնանորոգման նախագծման աշխատանքներ: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի իրականացվել և ավարտվել են 22,8 մլն դրամ արժեքով ներդրումներ:

«Տաթև, Շամբ և Սպանդարյան ՀԷԿ-ում փակ պահեստների հիմնանորոգում» ենթաուղղությամբ 2017 թվականին համաձայնեցված էր 94,0 մլն դրամ ներդրումներ: Հաշվետու տարում փաստացի իրականացվել և ավարտվել են միայն Տաթև ՀԷԿ-ում փակ պահեստների հիմնանորոգման աշխատանքները՝ 32,4 մլն դրամ արժեքով:

«Հիդրոէլեկտրակայաններում կամրջակային կռունկների վերականգնում և արդիականացում» ենթաուղղությամբ 2017 թվականին համաձայնեցված էր 192,3

մլն դրամ ներդրումներ: Այս ուղղությամբ իրականացվել են 198,0 մլն դրամ ներդրումներ, որոնք ավարտվել են:

«Տաթև և Սպանդարյան ՀԷԿ-երի շենքերի հիմնանորոգում» ենթաուղղությամբ 2017 թվականին համաձայնեցված էր 183,2 մլն դրամի ներդրումներ: Հաշվետու տարում փաստացի իրականացվել են 69,1 մլն դրամի ներդրումներ, որոնք ներառում են նաև վերոնշված ՀԷԿ-երի մարտկոցային սրահների հատակների թթվակայունացման աշխատանքներ:

«Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում» ենթաուղղությամբ 2017 թվականին համաձայնեցված էր 18,3 մլն դրամ՝ բջջային, IP հեռախոսների, համակարգիչների և համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով: Փաստացի ձեռք են բերվել 17,3 մլն դրամի հիմնական միջոցներ:

«Գրասենյակային գույքի ձեռքբերում» ենթաուղղությամբ 2017 թվականին համաձայնեցված էր 8,0 մլն դրամ: Փաստացի ձեռք են բերվել 7,4 մլն դրամ ընդհանուր արժեքով հիմնական միջոցներ:

Հաշվետվության համաձայն, 2017 թվականին ընկերությունը ձեռք է բերել վերհան ավտոմեքենա՝ 35,9 մլն դրամ արժեքով, որի համար համաձայնեցված էր 38,0 մլն դրամ:

ԲԱԺԻՆ 4.
Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

4.1. Փաստացի կատարված ներդրումներից նվազեցված ներդրումների ծավալը

2017 թվականի ընթացքում Ընկերության կողմից փաստացի ավարտված 513,3 մլն դրամի ներդրումների ծավալում առկա են ներդրումներ, որոնք ենթակա են նվազեցման ընկերության սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, մասնավորապես.

1. Հաշվետվության ուսումնասիրության արդյունքում 13,5 մլն դրամի ներդրումներ նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ ներդրումային ծրագրով նախապես համաձայնեցված չլինելու պատճառով,
2. Նախագծային աշխատանքների ուսումնասիրության արդյունքում ևս իրականացվել են նվազեցումներ, մասնավորապես՝ Գորիս քաղաքի վարչական շենքի հիմնանորոգման նախագծման աշխատանքները, որոնք շահագործման են հանձնված 14,2 մլն դրամով, նվազեցվել են լիցենզավորված գործունեությանը դեռևս չմասնակցելու՝ դրանց հետ կապված աշխատանքներ չիրականացնելու պատճառով: Վերոնշյալ ներդրումների՝ Ընկերության սակագնային մարժայով փոխհատուցման հարցը կքննարկվի նշված նախագծերի արդյունքում իրականացված աշխատանքների ավարտից հետո,
3. Կապալառու կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ ակտերում առկա գումարների և շուկայական գների համեմատության արդյունքում նվազեցվել է 36,6 մլն դրամ,
4. Իրականացվել է նաև հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի համադրում: Համադրման ընթացքում նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը համեմատվել է փաստացի իրականացված ներդրումների ծավալի հետ՝ վերը նշված

նվազեցումների իրականացումից հետո: Արդյունքում, հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է 47,7 մլն դրամով, որը ևս նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից հետևյալ ենթաուղղություններով.

- անվտանգության համակարգի բարելավում՝ 22,4 մլն դրամ,
- համակարգչային տեխնիկայի ձեռքբերում՝ 60,0 հազ. դրամ,
- չափիչ սարքերի, գործիքների և անվտանգության պարագաների ձեռքբերում՝ 352,3 հազ. դրամ,
- հիդրոէլեկտրակայաններում կամրջակային կռունկների վերականգնում և արդիականացում՝ 5,6 մլն դրամ
- յուղամաքրման համար անհրաժեշտ շարժական սարքեր՝ 19,2 մլն դրամ:

5. Հաշվի առնելով, որ օտարված (վաճառված) հիմնական միջոցներն այլևս չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը, հիմնական միջոցի օտարման (վաճառքի) արժեքը՝ 3,8 մլն դրամ՝ նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

4.2. Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Հաշվի առնելով վերլուծության արդյունքները՝ Ընկերության կողմից 2017 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը ամփոփված է ստորև՝ աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3
մլն դրամ

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի սակագնով փոխհատուցման ենթակա 2017 թվականի ներդրումների ծավալի ամփոփ վերլուծությունը

1	**Իրականացված ներդրումներ**	**693,6**
2	**Անավարտ աշխատանքներ**	**180,3**
3	**2017 թվականի ընթացքում շահագործման հանձնված աշխատանքներ**	**513,3**
4	**Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում՝**	**115,8**
4.1	Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումներ	13,5
4.2	Լիցենզավորված գործունեությանը չմասնակցող ներդրումներ	14,2
4.3	Ապրանքների և ծառայությունների շուկայական գների մոնիթորինգի արդյունքում իրականացված նվազեցումներ	36,6
4.4	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումները գերազանցող ներդրումներ	47,7
4.5	Օտարված(վաճառված) հիմնական միջոցներ	3,8
5	**2017 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումներ**	**397,5**

Եզրակացություններ

Ամփոփելով Ընկերության ներդրումային գործունեության արդյունքները նշենք, որ 2017 թվականի ներդրումային ծրագիրն իրականացվել է 37%-ով: Հաշվետու ժամանակահատվածում ավարտված ներդրումների ծավալը կազմել է 513,3 մլն դրամ, իսկ չափիչ սարքերի և յուղամաքրման համար անհրաժեշտ շարժական սարքերի ձեռքբերում ենթաուղղությամբ նախատեսված հիմնական միջոցները ձեռք են բերվել ամբողջ ծավալով:

Իրականացված ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը կազմում է 397,5 մլն դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հիդրոէլեկտրակայանների հիդրոլոգիական կառույցների և պատվարների ուսումնասիրությանն և շինարարական աշխատանքների գնահատմանն ուղղված ներդրումները չեն ավարտվել, իսկ շրջակա միջավայրի պաշտպանության, տեխնիկական անվտանգության և առողջության պահպանման ոլորտի գործառույթների բարելավման համար նախատեսված ներդրումներն իրականացվել են մասնակի: Հարկ է նշել, որ շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով նախատեսված 400,0 մլն դրամ ներդրումներն իրականացվել են ամբողջությամբ:

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1 -	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 13-ի №540Լ որոշումը «ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին».
Որոշում 2 -	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի №415Ա որոշումը «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության 2016-2017 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին».
Որոշում 3 -	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 21-ի №260Ա որոշումը «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին».
Որոշում 4 -	«ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 21-ի №260Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 2017 թվականի հոկտեմբերի 25-ի №453Ա որոշում
Հաշվետվություն -	«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականին փաստացի կատարված կապիտալացվող և ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումների վերաբերյալ ընկերության 2018 թվականի հուլիսի 11-ի №0080-2018 գրությամբ ներկայացված ճշգրտված հաշվետվությունը: